—Կոնդակ Գեր. Տ. Մխիթար Եպիսկոպոսի անունով Աստրախանի թեմի առաջնորդ հաստատուելու առթիւ. 29 Մարտի, թ. 633.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մարտի 14-ին Սինոդը թոյլ տուեց Երևանի Կոնսիստորիային ընդունել Աղէքսանդրապոլի գաւառի Սոնգիւրլի գիւղի բնակիչ Արշակ Տէր-Մէլիքսեդեկեանին և Կապս գիւղի բնակիչ Արշակ Ծառուկեանին հոգևոր կոչման մէջ՝ իւրաքանչիւրին իւր գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու, իսկ Ջեռնադրութեան համար հրաման տուից Տ. Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսէսեանին. Թ. Թ. 197—198.

—Մարտի 29-ին Սինոդը լսելով զեկուցումն, որոշեց յայտարարութեամբ ամենախոնարհաբար խնդրել Վեհափառ Հայրապետից հոգևոր հաստատութիւնների և պաշտօնեաների գործերն ու հաշիւները քննելու համար կարգել յատուկ քննիչ. Թ. 213.

—Մարտի 31-ին Սինոդը քննելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի առաջնորդի մատուցած՝ Բելցում պ. Մկրտիչ Լուսեղէնեանցի նուիրաբերութեամբ կառուցանելիք եկեղեցու յատակագիծ ուրուանկարը, թոյլ տուեց Քիշնև քաղաքի վերաբնակիչ Մկրտիչ Լուսեղէնեանի հաշուով կառուցանելի եկեղեցու շինութիւնը այն պայմանով, որ նախատաճարի մակարդակը փոխուի համեմատ այն նոր գծագրին, որ ուղարկուելու է այս հրամանի հետ, և երկրորդ՝ որ օրէնքի պահանջի համեմատ տաճարի յատակագիծը հաստատուած լինի նահանգական վարչութեան շինարարական մասից.

Ներկայացրած յատակագծի մէջ գամբարանի վերաբերեալ և այլ մասերը մնում են անփոփոխ. Այս վճռի ճիշտ կատարման համար հանել հրաման Նոր-Նախիջևանի

և Բեսսարաբիոյ Կոնսիստորիային, պատուիրելով տեղեկութիւն տալ Սինոդիս կատարման մասին։ Թ. 222։

— Ապրիլի 2-ին Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի անցեալ Մարտի 19-ի № 532 կոնդակը, որով յայտնում է, որ ՆՈՐԻՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ Ամենաողորմածաբար պատուիրել է Մխիթար եպիսկոպոսին լինել Ատրպատականի թեմի առաջնորդ, հրամայեց Տ. Մխիթար եպիսկոպոսի Ատրպատականի թեմի առաջնորդութեան պաշտօնում Բարձրագոյն հաստատութեան մասին յայտնել իրան Տ. Մխիթար եպիսկոպոսին և Ատրպատականի Կոնսիստորիային Թ. 226։

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԸ

«Արդարև յարեաւ Տէր»
Ղուկ. 24, 34.

Ինչով է լցուում յարութեան այս օրը մեր սիրտը։ Մենք խօսում ենք մահուան վերայ տարած. կեանքի յաղթութեան մասին, որովհետև մենք Խաչեցեալի կեանքից ենք խօսում։ Զինուորները և ժողովուրդը, քահանայապետները և գիւղացիք հաւասարապէս Նրան մահուան դատապարտեցին, Նա մեռաւ։ Նրա կողից արիւն և ջուր հոսեց, հաւատարիմ բարեկամները Նրան սառը և դըժգոյն գերեզմանի մէջ դրին։ Սակայն բոլոր դատավճիռները, բոլոր մեխերը և բոլոր խաչերը բաւական չեն Նրան մահացնելու, ոչ մի քար և ոչ մի կնիք արգելք չի կարող լինել Նրա կրկին գալստեանը, հրեշտակները պարտական են արթնանալու ժամանակ Նրան հսկել, և Գողգոթայի արտասուքներին հետևում է յաղթութեան ուրախութիւնը։